ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 122

ք. Երևան 08.06.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության և «Կասա Կառուցապատում» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 10.05.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-10/12-2 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Ընկերության տնօրեն Մարտին Վարդանի Ջիլավյանը 2022թ. հոկտեմբերի 25-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերության տնօրեն, իսկ «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 07624927) 2022թ. հունիսի 10-ից մինչև 2024թ. հունիսի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն՝ Ընկերության և «Ֆոռտունա 4» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ընկերության միջև 10.05.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/12-2 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մայիսի 29-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ